

## ՀԱՅ ԱՃՈՒՂՆԵՐ

ՊԵՏՐՈՎԱ-ՔԵՆԵԿԻՆ-ՀԱՅԵՎԱՆ

2. *Lk 10:24, p.*

#### **Р. ЧАЛЬЩИКУ ГРАНЬГЕ**

§ 28. Բանաւոր. Ազգական արուեստի մէջ պակաս դժուար տեղ չի բռնում և հրապարակական մրցումը, բլէքէսալլը, բարձր: Մրցութեան տեղը՝ մարտաքեան՝ լինում է կամ մի բացօքեայ աեղ, հրապարակ, կամ մի մեծ սրճարան: Օր առաջ արգէն տարածում է լուրջ թէ շայսինչ աշուղը եկիլ է այսինչ աշուղի նեա մրցելու, փորձուելու, եկուորդ լինում է կամ մի անուանի աշուղ, կամ նոր երեացող ոյժ, տեղացի յայտնի աշուղին ցոյց տալու իւր շնորհարը, տմարքիաթը, շնորհքը: Հաւաքւում է բազմութիւն հասարակութիւն ունկնդիր և վկայ, իսկ տեղական և մասակայ աշուղներ էլ հետաքրքրութիւնից բացին ներկայ լինելով հանդիսանում են որպէս ընթերակայ և դատաւոր: Մրցող աշուղները նաև մինչամարտութեան ժամանակ ուղղութիւն է ատրճանակը առաջնին նաև է արձակում ով ինքը չի եղել առաջարկողը, այնպէս էլ այստեղ առաջնին հարցերը այն աշուղն է ասում, ով պատճառ չի եղել այդ մրցման: Նորենիք, փորձուել ուղարկը, ուշագրութեամբ լսում է գարսկար աշուղի երգը, թէ բնչպիսի լարուած զրութեամբ ու սրբի բարախումագ սպասում են ներկայ եղողները, զրան պէտք է միայն ականատես լինել: Խօսք չը կայ որ աւելի և յարուած ու շփոթուած դրութեան մէջ են լինում զրութիւն:

<sup>1)</sup> Տե՛ս Ազգայինական հանգիւ X. և XL պրոեկտ:

բանները, աիրում է այնպիսի ոգեորութիւն, որ մարդ մի բռպէ կարծում է թէ Օլիմպիական խաղերի զարերումն է ապրում: Այսպիսի պատկառանքով ու լրջութեամբ են վերաբերում աշուղները, թէ ունկնդիր հասարակութիւնը այդ գործին, որ ճիշտ կարձև գիտութեանց կանառում ու ճեմարանում ակադեմիկ ու պրոֆեսոր վէճ աւնին մի նշանաւոր խնդրի կամ գիտակրտացիայի մասին:

Յանկարծ աիրուց լուս թեան, ժողովրդի բացար-փըսորչի միջից լուսում է վարպետ աշուղի հեղինակաւոր ձայնը. Նա երգով հեղնում է նորեկին, ծագրում է նրա յանզգնութեան վերայ որ համարձակուել է գուրու զուլ իւր նման յայտնի աշուղի առաջ. մի խօսքով շատ բարձրից խօսելով ուզում է հենց սկզբից նրա աչքը վախեցնել: Այս ամեն մի տուն յարձակուական երգին նա պատասխանում է անպատճան նոյն դաշինյով,—ձեռվ, (չափ, վանկ, յանդ.): Այս սկզբնական հականառութիւնը, որ համեմատարար թեթի բան է լինում, կազմում է զեմ ևս մրցան նախերգանքը. ինչպէս որ ըմբէջները կոչելուց առաջ զեմ մի քանի անգամ միմանց մօտենում են ու թափ տալիս փորձելու հակառակորդի ոյժը: Յետոյ եկայր աշուղը ՏՈՂ ածում է մի զաւարին եղանակ, երեսի ցոյց տուրու երածշատութեան մէջ իւր անեցում ընդունակութեան չափը: Նուազածութիւնից յետոյ սկսում է իսկական մրցումը, Վարդեատ աշուղը ծանր հեղանակով երգում է մի զափուլլամա, զանազան հարցեր պարանակող մի երգ, հրամիրելով մեկնել իւր հարցերը: Հակառակորդը իւր բոլոր ոյժը, ընդունակութիւնը, ընդորնքը գործ է զնելու որ նրա երգելու միջոցին մաքի մէջ մեկնէ բոլոր հարցերը ու ուանաւորի վերածէ նոյն չափով ու յանզով: Այսաեղ է անս աշուղական արուեստի ամենազգութեարին կոչմը, այսաեղ է աշուղի յանկարծախօսութեան (էմբոսվիսասիթն) ընդունակութեան չափը յայտնի լինում. այսաեղ է եկայր աշուղի ընդունակութիւնը: Նա եթէ կարողանում է արուեստ հարցերին պատասխան գտնել ու երգ հիւսելով նոյն հեղանակով առել, արժանի, է լինում վարպետ աշուղ կաչուելու, իսկ եթէ չի կարողանում մըրցութեան զիմանալ՝ սազը ձեռքից առնում են ու ճանապարհ ձգում. այսինքն շզնա, զու արժանի չես աշուղ կոչուելու: Պատահում է երբեմն գործը բոլորովին այլ կերպարանք է ընդունում: Եկայր աշուղը լինում է նոյնպէս յայտնի կամ մի նոր տաղանգաւոր երիտասարդ ու երր պատասխանում է վարպետ աշուղին ու ինքն էլ ստանում վարպետի կոչումը, զրանով չը բաւականանալով ու զում է և կապել այսինքն յաղթել նրան: Նա ինքն էլ իւր կոդից մի հարցական երգ է ասում աւելի զժուար կազմով ու յան-

գով ու ինդրում է պատասխանել: Հին վարպետը դժուարանում է պատասխանել ու մնում է շուարած: Իրարանցում է ընկնում ժաղավրդի մէջ, որ մի «զարֆիր տղայ» իրենց յարգուած վարպետին «կապեց»: Վերջինս աշուղական աւանդական սովորութիւնը դժբել չուզելով իւր ձեռքով սազը յանձնում է նրան ու ձեռքը համբուրում խօսուավանելով նրա իրենից բարձր լինելը. բայց այսպիսի հազոււազիւտ դէպքերում յաղթողն առնասարակ վեհանձնաբար յետ է դարձնում սազը հին աշուղին ու ինքն էլ նրա ձեռք համբուրում, խնդրելով նրա «հայրական օրննչնքը», Այս տեսակ մրցութերի նկարագրութիւն և երգեր կան «Արութիւն և Մանուէլի» մէջ և Զիւանու փոխազրած ներիաթներում. հետաքրքրուողը կարող է նայել:

Ուշազրութեան արժանին այն է, որ յարգուած ու սիրուած ծերունի աշուղը եթէ յաղթուում է մի նոր յայանուող աշուղից, ժողովրդի մէջ իւր պատիւը չի կորցնում, որովհետեւ նա էլ իւր ժամանակին ուրիշներին է յաղթել, այլ մնում է իւր ասամբանի վերայ. միայն թէ յաղթովը նրանից աւելի հեղինակութիւն ու համարում է ձեռք բերում ու սազը կախում նրա սազից վեր<sup>1)</sup>: Մեր աշուղների պատմութեան մէջ նշանաւոր մրցութենքից յիշենք. Քեշից Օղին (երկրորդ) Նարուում յաղթել է յայանի թուջարին, Շիրինը Երզումում Հասպի երեկի թուրք աշուղին, Սայեաթ-Նովին ծերութեան օրերում Թիֆլիսում ևմի երեկի օտարական աշուղի (Ախվերգեան անունը չի տալիս), Զիւանին երիտասարդ ժամանակ Ալէքսանդրապոլուում Զանիրի և Հաւէս անուանի աշուղ-ներին ու յետոյ զանազան ժամանակներում երեք թուրք աշուղների:

Աշուղական մրցման բանաւոր կողմը ու յանկարծախօսական վէճերն աւելի աշքի հն ընկնում մուհամենի ժամանակի, Մուհամենին, ինչպէս ցոյց տուինք վերեռում, մի խրթին հանելուկ պարունակող երգ է, որ վարպետ աշուղը հրապարակ է հանում լուծելու. այդ հնատաքրքրութեան արժանի գործը ունի իւր առանձին նկարագրութիւնը: Աւա.

Մուհամենին որ մեծ մասամբ լինում է 3—4 տունից կադ-մուած մի հանելուկ՝ Դոշմայ կամ Գազիշ, խոշոր տառերով զրուում է մի մեծ թղթի վրայ ու ասեղներով ամբացուելով մի շալի՛ կախ-

<sup>1)</sup> Պէտք է զետենալ ոք «Հնաբանում աշուղները տարեց կախում են ըստ աւազութեան. մի աշք վերէ տանելու վերաբէն կարող է լինել ուստ կաշք աշուղներին: Եթի ուստ ուսուց է զալիս՝ պէտք է իւր սազը կոչ անի սմնելոց ներքին մինչև ոք մրցութեան դուրս կը գայ ու կը որոշուի երա սասիննել:

ւում է սրբարանում աշուղների ամրիոնի վերևը, առաստաղի մօս։ Հանելուկի հեղինակը, որ վարպետ աշուղներից մէկն է լինում, նույնում է մէջ աեղը Մուհամեմի տակ, իսկ աջ և ձախ տեղաւորում են քաղաքի և 2րջակայ տեղերից այդ առթիւ հաւաքուած աշուղները ըստ աւտոգութեան թուով 15—20 հոգի, Հաւաքուում են քաղաքի պատուաւոր տնձինք, իրդ ու աշուղ սիրող անազին քաղաքում, որքան որ տեղաւորում է սրբարանը, որ բաւական ընդուրմակ աեղ է լինում։ Հանդէսը բացում է այսպէս։ Հանելուկի հեղինակը իւր սպահուատաք բացարութիւնը մի ծրարի մէջ կընքած հասարակութեան ներկայութեամբ յանձնում է սրբարանաւորութիւնը պահպանի պահելու, որ յետոյ սառուցն, կեղծութիւն, խորդախութիւն չը պատահի։ Աշուղնական այդ ամերող ոքքեարը նուազում է իւր հեիմնը ջեղջյիրը, որից յետոյ հանելուկի հեղինակը բարձր ձայնով կարգում է իւր մուհամեմէն, որ ով որ չի լուկ կամ հնառուց կարգալ չի կարող, լսէ ու իմանայ, վերջին անգամ մեր տեսած մուհամեմէն թօ-ականին սկզբներում կախել էր Արէքսանդրապոլում աշըր Զամալին։ աւելի մօտ գաղափար տալու համար թէ բնչպիսի բաներ են լինում այդ հանելուկիները, թոյլ ենք տալիս մեզ տառջ բերելու Զամալու Մուհամեմէն—

Զուարեացնող, զեղեցիկ մի առարկայ է սիրուն  
Ասրհուրդը հասկանալու մարզը պէտք է բանիքուն.  
Քագաւորից սկսած մինչ յետին առմիկները  
Ցանկանում են ունենալ այդ բանից հաստատուն։

Բոլոր մարդկային շեղը, մինչ երեխան սիրուն է,  
Այդ բանի պատճառովը շատ մարդ մնում է առանց քուն,  
Իր նիւթը երկրից առած, քանի կերպ խառնուելով  
Փայլում է արևի գէմ հանդերձը հազած զարդարուած։

Ետո ժամանակ շըջում է ինքը առանց զգալու,  
Արծաթ, ոսկին զազում են նրա յետնից ոլորուն,  
Զամալի, այս պահուատ ով աշխատի զանելու՝  
Պէտք է լինի զարգացած, բնագէտ, հաստատ գիտուն։

Ծ վանկ. 11 տառ. տաների հաշիւը 11, 144.

Ինչպէս տեսնում ենք այնքան էլ հեշտ չէ այսպիսի մի հանելուկի լուծումը, որքան էլ որ արուած է տաների և վանկերի թիւը և բոլոր տաների զամարը։ Սկսում է հարց ու պատասխանով անզարասատից երգեցողութիւնը, մօտաւորապէս այսպէս—

Զեզ եմ առաջարկում, վարդեաներ գոված,  
Իմ պահուստը խրթին է ու շատ դժուար,  
Միտք արէք, աշխատէք բան ու գործ թողած,  
Որոնեցէք, գտէք, աշբա-աշբալար<sup>1)</sup>։

Հեղինակի այս խօսքերին պատասխանում է նրա մօսիկ նըստած աւագ աշուղներից մէկը, զիցուք Զիւտնին—

Աշխատանքով մարդ կը գտնի ամեն բան,  
Եթէ ունի նաև մտաւոր բանալին,  
Չի մեալ պահուստգ ծածուկ ու խափան,  
Որոնենք կը գտնենք, աշբա Զամալի։

Այսոքս, հերթով բոլոր աշուղները միւսի տուն ասում են ու հաւատացնում հեղինակին, որ կը գտնեն։ Յետոյ հեղինակը (լաւ է այսուղ խօսնեք մասնաւորապէս)։ յետոյ Զամալին նոր երգով մի քիչ իր լուսաբանում է իւր Մուհամմէն զանալով աշուղներից մէկին—

Երկնագոյն է իմ պահուստը թանգագին,

Գրաւիչ է, գեղեցիկ է, կալոզին։

Երկըրի մարմինն է, ծովերու հոգին,

Որոնէ որ գտնեն, աշբա Ֆիզանի։

Ում որ իւր խօսքերով գարձաւ հանելուկի հեղինակը, այն աշուղը պէտք է անշուշտ պատասխանը երգէ. այսոպիսով բոլորը մի մի տուն երգուում են։ Այս գեռ գործի ոկիզըն է։ հեջա ձեն ու եղանակը. մասնակցում են և երիտասարդ աշուղներ. բայց երբ որոշուում է երգի ձեն ու յանգը գժուարացնել, քանի հոգուց մընում են ութիւ, աասը. կամաց կամաց աշուղները հեռանուում են ասուարիզից որ չը խայտառակուին ու սազը ձեռքից չը տան։ Մի փոքր հանգստութիւնից յետոյ ճիշտ որ վարդեան աշուղները երգի ձեռ փոխում են ու ընտրում զժուար յանգեր, օրինակ սովոհան բառով, ուրեմն բոլորը պէտք է իրանց երգերը վերջացնեն նման բառերով որ գժուար է գտնուում՝ սկան, վատան, մնան... կամ ընտրում են այնպիսի բառեր՝ որ ա սկիզբ և անկ վերջաւորութիւն ունենան, ուրեմն ամենը իւր խօսքը վերջացնելու է սուտպահ և ազդենակ և ապտակ և այլ նման բառերով։ Ի հարկէ մէկի ասած բառը միւսն այլն իրաւունք չունի կրկնելու, պէտք է նոր բառ գտնի ու իւր երգը վերջացնէ նրանով։ Պատահում է որ աշուղներից մէկը մարտում մի

1) Վերջին խօսքերը թիւցներէն են «աշուղ, աշուղներ»։ Կարծես աւանդութիւն է որ մինչև հիմա մը աշուղները պահում են այդ վերջարարութիւնը։

բառ պատրաստ ունենալով՝ դիցուք շարուահակը պատրաստում է այդ վերջաւորութեամբ մի բառ տողեակ բան շինել՝ որ իւր հերթը հասնելիս երգէ, յանկարծ, անողասելի կերպով, մի այլ աշուղ ասում է շարուահակը ու իսպառ փշացնում իւր ընկերի դործը։ Խեղճը զայրացած և վախեցած նորից է աքնում, ապա թէ ոչ իւր արուեստակիցների և հաստրակաթեան առաջ շամօթով։ Կը մնայ, Վայ նրան ով իւր հերթը զալիս պատրաստուած չեղաւ, սխալ բան ասեց, հասարակութիւնը, որ լաւ հետեւմ է ամեն բուքէ, խելոյն ընդհատում է նուազածութիւնն և գոռում ոչեղաւ, չեղաւ, ուստայ ֆիզակի կամ ուստայ շայինչեւ...

Երգեցողոթիւնն ու նուազածութիւնն շարունակում է ժամերով, անձանձրոյթ, տիրում է անազին ովնորութիւն, բերկրանք, ուրախութիւն, քրոքըռում... Սրճարանը հաստրակական տեղ է, մուռաքը ապատ, ամեն մարդ մանում է զուրս զալիս։ Երբ ուշ երեկոյին երգ ու նուազը վերջացնելը մօսենում է և աշուղները յոդնած ուղում են շշարաշ անելք վերջացնել, այն ժամանակ մի քանի տուն երգով նրանք շգովում են ներկայ եղող պատուալոր քաղաքացիներին, որ կը նշանակէ շայօօր վերջացնում ենք... Օրինակներ—

—Հմուտ արուեստագէտ, զործի մէջ փորձուած,  
Ահուանի վարպետ է Արդար-Մանուկը,  
Բազում աշակերաններ ունի երկիւղած,  
Քաջ ճարտարապետ է արդար Մանուկը։

—Թաղաքի մէջ ունի յարգելի անուն  
Երեսփոխան մեր Սարոյեան Դաւիթը,  
Լսեց մինչև վերջը ուրախ զուարթուն,  
Միշտ պատուարժան մեր Սարյեան Դաւիթը։

—Պարթե հասակ տնի, լայն թիկունք ու թե,  
Հաստատ զօրապետ է Առաքել աղան,  
Գողի, աւազակի օրն անում է սե՝  
Զիաւորաց պետ է Առաքել աղան։

Գովաանքի արժանացող մարդիկ, այնուէս էլ շատ ուրիշները, զրամական նուէրներ են ուզարկում աշուղներին, որ հաւաքուելով ՚ի ցոյց է արում հանելուկի շորս կողմը, թղթադրամները ասեղներով շալի վերայ կպցնելով, իսկ արծաթները երկու կողմից կախուած խնձորների վերայ խրելով։

Նոյն անսակ երգ ու նուազածութիւնը, զովաանքը շարունակում է 15—20 օր, մինչև որ կը գանուի, կը լուծուի միւնամ-

մին Հեղինակը օրէցօր աշխատում է աւելի լուսարաներ, շատ անգամ էլ դիտմամբ մոլորեցնում է, թանի հանելուկի մեկնումը ուշանում է, այնքան աւելի շատանում է նուէլ ստացուած փողը, շալը ծածկում է թղթագրամեմբով ու խնձորները ծանրանում են ապասի-ներով: Որ աշուղը որ հանելուկը մեկնեց՝ նա պէտք է վերցնէ այդ գումարը, իսկ եթէ հանդիսականներից մէկը լուծեց՝ նա գումարը կէս է անում հեղինակի հետ: Պատահում է, որ որոշեալ ժամանակում ոչ ոք չի կարողանում մեկնել մուհամմէն, այն ժամանակ հիղինակինը ճառագրակառէս յայտնում է իւր պահուարը ու գումարի կէսը ինքն է ստանում, իսկ միւս կէսը բաժանում են բոլոր աշուղների միջնու Աշուղ Զամալու յիշեալ մուհամմէի ժամանակ, յիշում ենք թէ ինչպէս Զիւանին օրերով նոյնում էր զրքերի ու բառարանների մէջ, տառերի գումարներ էր հաշուում ու աշխատում էր գտնել պահուարը, անհանգիստ էր, բոլորի յոյսը իւր վերայ լինելը զիւէր, ամօթ էր համարում իւր անուանը, որ հանելուկը, որի տակը ինքը նստած է, մնայ անլուժելի: Վերջապէս մի կիրակի օր էր, որճարանում ասեղ ցցելու տեղ չկար, աշուղներից մնացել էին միայն հինգ հոգի, որովհետեւ այդ օրն արգէն բանը հասել էր «էվէլ անորրի», զինջլլամայի, ալֆիամայի և այլ գժուարաձեն երգերի: Հետաքրքրութիւնը կատարեալ էր. մի երկու ժամ երգեցողութիւնից յետոյ յանկարծ բարձրացաւ Զիւանու ձայնը՝ բարձր հանդիսաւոր «է՞յ ես ա մը» գոռալով սկսեց բեկնդապիվ հետեւեալը ասել.

Լուսաւորչի զօտին, Տրդատի թագը,  
Սանգուխա թագաղաւեր զլիի պսակը  
Պահուատդ էր զարդարում ոսկէ մանեակը  
Դրակոնտիկոնն է, աշրդ Զիւանի:

Աշը Զամալին ցնցուեց. չը կարողացաւ զագել իրեն: Երդով պատասխանելու...—պարաւաւորութիւնը եթէ չը լինէր, անզից վեր պէտք է թուչէր, բայց մի-երկու բոպէից յետոյ հասարակութեան իրարանցումը հանգստացրեց հանդիսաւոր երգելով—

Ժառանգել ես միծ աշուղի զու անժշն,  
Մի պահուատ չի մնալ քնզանից թագում.  
Աշխատեցիր ու աքնեցիր առանց քոն  
Որոնեցիր զտար, աշրդ Զիւանի:

«Զան, մաշնլլա, ծւատա Զիւանի, բրաւօն, թնդացնում է հասարակութիւնը և տիրում է մի խառնաշփոթ ազմուկ: Ով չէ լսել նորից է ուզում լսել թէ ինչ տանց Զիւանին, բնչ է բա-

ցատրութիւնը, կամ ի՞նչ բան է գրականզիկոնը Պարզուած է որ դա զուս հայերէն բառ է (թէև քիչ զործածական), որ նշանակում է մինչև, էմայլ։ Հասարակութիւնը խոկայն պահանջում է կնքուած ծրարը. բերում բաց են անում, անանում են պարզ զրուած է Դ Բ Ա կ ո ն դ ի ո ն ։ Տառերի զումարը հաշուած են ճիշտ որ 11, 144. ուրիշն ոչ մի կասկած չը կայ, հանելուկը լուծուած է։

Պէտք է ասել, որ աննոն անգամ մահամօտ կախելը աշուղդներին մեծ զիխացաւանք է պատճառում ու նրանց շատերին զնում զժուար զրութեան մէջ՝ եթէ զայիս են հաւաքւում, զժուար է մասնակցելը, հանելուկի ասկ մինչև վերջը զիմանալը. եթէ չեն զայիս, ասում են շայս ինչ աշուղը վախեցաւ, չեկաւ, սա աւելի անստունելի է։ Հասարակաց կարծիքը չի կարող չը զնահատել հասարակութեան մէջ ապրող մարզը, նրա աշուղը։

Բացի մըցումների և հանելուկ կախելու ժամանակից մի որևէ է աշուղի անգամարաստից ասելու ընդունակութիւնը յայտնի է լինում նաև զանազան հանգչեների, իննոյցների և հացկերոյթների միջոցին՝ երբ հարկ է լինում, կամ խնդրում են մի նոր բան ասել։ Հարսանիքների ժամանակ ժորապահկեալների զովհասը, ունարսի մնաս բարովք արգէն ամեն մի աշուղի համար սովորական նիւթ է։ Աւելի լուրջ կերպարանք է ընդունում յանկարծախօսութիւնը՝ երբ աշուղը յանկարծ մի նշանաւոր ու սրտաշարժ գէպքի լուր է լուսմ և իսկոյն, անգամարաստից մի բան ասում։ Ազամ Ակոսու կործանումը լսելիս երգեց մի մուխամմազ, Շիրինը՝ յանախ նոր երգ իննորելիս խոկայն նորն էր ասում։ Զիւանին Գրիգոր Քանչշեանի մասը լսելիս ոզբաց նրա անգամնալի կորուսու՝ անգամարաստից։

§ 29. Դ Ր Ա Լ Ո Ր.—Բանաւոր մըցումից յետոյ տեմանենք այժմ գրաւորը, այսինքն այն, ինչ որ անգամարաստից չէր ասում, այլ զրում էին աշուղները և միմեանց ուզարկում՝ կամ տարածում որ հասարակութիւնն իմանայ. միմեոյն էր, ինչ որ այժմեան լրագրական բանակուները և ընդդիմախօսական նամակները։ Մի աշուղ երգ ժամանակակից հարցերի մասին կամ մի այլ նորցի վերայ մի երգ էր յօրինում. նրա կարծիքը կամ յայտնած մոքերը զուր չէին զայիս միւսովն ու սա զրում էր նոյն չափով ու ձեռվ մի երգ որ հանգչազ, երգւում, աարածւում էր համելով հակառակորդի ականջին։ Այս բանը հին ծագում ունի, զեռ Շնորհալու ժամանակները մեր սրբազնն բանաստեղծութեան մէջ էլ նկատում էր այսպիսի զիմանարար զրուած տողեր։ Հին աշուղներն էլ սիրում էին միմեանց երթեալ հեռուից առանց մօտ տեսութեան, միմեանց ցոյց տալ իրենց զլուխը։ Ներկայումս համարեան թէ

վերջացել է այդ սովորութիւնը, բացառութիւն է կտղմում Զիւ  
ւանու և այժեամբ ի գէմ գրած պատասխաննը.

—Անհոգ ես, չես գիտեր, ինչ կայ քո մասին՝  
Պատառում են քո խեղճ անձիք վասին...  
—Անհոգ չեմ, լաւ գիտեմ, ինչ կայ ինձ համար.  
Որսկանն անտառում շրջում է անդադար...

Շիրինի ժամանակ այդ տեսակ բանակուական երգերից  
ամենքից աւելի մեծ աղմուկ հանց «Ալբարժի երգը» Ով ծանօթ  
է այդ շրջանի հայ աշուղական երգերին, ով թիրթել է Քնար  
հայկականը, Ուկանի ըմբար ները. նա անշուշտ տեսած կը մինի  
այդ երգը իւր պատասխաններով:

Գրաւոր մըցումներին ու հարց պատասխանին է վերաբերում  
աշուղների մէջ եղած երգով նամակագրութեան սովորութիւնը:  
Մէկը մի ոտանաւոր-նամակ է զրում հարցերով, միւսը նոյն ձևով  
ու յանգով պատասխանում է Մինչն անգամ սովորական բարեաւ-  
գիր նամակներն էլ աշուղները շատ անցամ միմնանց զրում են  
երգով, հենց կարծես այդ նրանից է որ նրանք ոտանաւոր աւելի  
ազատ են զրում քան արձակ: Օրինակ Ձիւանու նախկին ընկեր  
Սաղային երկար ժամանակ նրանից նամակ շանենալով զրում է—

Տասը տարին լրացաւ, շունիմ մէկ նամակ, ով Զիւան,  
եթէ ճոխարան շր կար, զոնէ հասարակ, ով Ձիւան.

Մէկ նայես պանդխաններին ինչն է նրանց միթթարիչ  
Բացի նամակ թնչ ունին սիրոյ յիշատակ, ով Ձիւան...

Եւ այսպիսի ձեռով շարտանակում է ամրող նամակը:

#### Գ. ԱՅՈՒԹԿԱՆ ԳԱՐՏՆԻ ԼԵԳՈՒՆ

**§ 30. Հերականական տեղեկութիւններ:** Աշուղական  
գաղտնի լեզու, կամ ինչպէս իրենք, աշուղներն են տառմ «Մարս  
լեզուն» ։ Նարուել է այն նարատակով՝ որ հասարակութեան մէջ,  
կամ մի օտար մարդու ներկայութեամբ, եթէ նրանք ոկտոր ու-  
նենան մի որևէ գաղանի բան խօսելու՝ խօսեն: Ո՞գ է նարել այս  
լեզուն, մրաեղ, որ թաւականին, յայտնի չէ. միայն աշուղներն  
ասում են որ Շիրինի ժամանակները շատ զործածական է եղել  
ու նաև է բերել Ալէքսանդրապոլի և Ղարաբ կողմերը՝ որ և տարա-  
ծուել է Անդրկովկասեան բոլոր քաղաքները: Ի՞նչ բան է այդ:  
Նոյն հայերէն խօսակցական լեզուն է, կերպարանափախուած,  
գարձուած այսպէս—